

# Մ Ա Ս Ի Ս

## Հ Ա Ն Դ Է Ս

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎ ՇԱՐԱԹՆ ԱՆԳԱՄ ՄԸ

ՏՆՕՐԷՆ  
ՀՐԱՆՏ ԱՍՍՏՈՒՐ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ  
ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ  
Պոլիս 20 Դրուշ  
Գաւառներ 25 »  
Օսար երկիրներ 6 Ֆրանք

ԳՐԱՍԵՆԵԱԿ  
Ղալաթիա, Տէմիր Խան, Թիւ 24

### ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Անոնք որ այցելած են Ազգային Ժողովոյ եւ Քաղաքական Ժողովոյ սրահներն ի Ղալաթիա, տեսած են երեք սեւաներկ ընդարձակ գրադարաններ, որք այդ խորհրդարաններու կահաւորման կը ծառայեն այժմ, եւ ուր 3000 ի չափ գրքեր կը մնան ի պահ բաւական տարիներէ ի վեր, — օտար լեզուով գրուած բազմաթիւ մատենաներ, մեծ մասն անկարեւոր եւ անօգուտ, սակաւթիւ ձեռագրեր, եւ հաւաքածոյ մըն ալ, անկատար հաւաքածոյ մը հայ մատենագրութեան տպեալ գործերուն, մէկէն միւսէն մուրացուած, գործածուած, հինցած հատորներ:

Այս է մեր Ազգային Մատենադարանը:

Այս այն Մատենադարանն է որուն բացումը տասնհինգ տարի առաջ այնչափ աղմուկ կը յարուցանէր եւ այնչափ պէրճախեալէ կ'աւետուէր ազգին: Ընկերութիւն կը կազմուէր զայն կազմակերպելու եւ ձօնադրելու նպատակով. այդ Ընկերութիւնը դիմումներ կ'ընէր ամէն կողմ, նուէրներ կը հաւաքէր, կը խուզարկէր թաղային զանազան գրատուններ, եւ, Վարչութեան հաւանութեամբ, հոն գտնուած կարեւոր հայ մատենաներն ու ձեռագրերը կը փոխադրէր Ազգային Մատենադարան. այդ Ընկե-

րութեան մէջ գործօն դեր կը ստանձնէին մեր գրագէտ եկեղեցականներէ ոմանք, հայ հոռմէական վարդապետներէն Հ. Ստեփաննոս Եազըճեան եւ Հ. Կղեմէս Սիպիլեան, աշխարհականներէն Գրիգոր Օտեան, Պէտան պէյ, եւ ուրիշներ ալ. տարիներով անդուլ անխնայ կաշխատէր նաեւ Յակոբ Արշակ, այն տոկուն ողբացեալ հայ գործիչը. եւ այդ հաւաքական ձեռքերով հազիւ կարելի կ'ըլլար ձեռք բերել, առանց ընտրութեան, առանց մեթոտի, խառն ի խառն հաւաքուած այդ գրքերն, որոնց համար ըսել թէ մեր Ազգային Մատենադարանը կը կազմեն, ամօթ է մեր ազգին:

Վարչութեան սեղանին վրայ Մատենադարանի խնդիրը չորս հինգ տարիներէ ի վեր յաւիտենական անդոյծ խնդիր մը դարձեր էր. ոմանք կ'ուզէին Կեդրոնական Վարժարանի Խնամակալութեան յանձնել Մատենադարանի հսկողութիւնը, այլք Ուսումնական Խորհրդոյ. արդի Քաղաքական Ժողովն, հուսկ ուրեմն, Աղաբէգեան Մարկոս էֆէնտին Մատենադարանի գրապետ կարգելուն առթիւ, — եւ այն ալ այդ պատճառաւ միայն գուցէ, — հարկ դատեց Մատենադարանի հոգն յանձնել յատուկ Մասնախմբի մը, որ պիտի գործէ Ուսումնական Խորհրդոյ վերին հսկողութեան տակ:

Բայց ի՞նչ պիտի կրնան գործել այդ

Մասնախմբի անդամք : Եթէ Ազգային Մատենադարանը պիտի մնայ ինչ որ է , լաւագոյն է որ այդ անդամներն հրաժարին , եւ գրքերն հանդարտ թողուին իրենց բազմամեայ փոշիներուն տակ :

Պէտք է որ Ազգային Մատենադարանը պարունակէ տպեալ հայ մատենաներու մէկ կատարեալ հաւաքածոյն : Այն Սահմանադրական սկսեալ , զոր Եւդոկիացի Աբգար զպիրը , տպագրութեան գիւտէն հարկւր տասը տարի ետքը , 1565 ին , կը յաջողէր հրատարակել ի Վենետիկ եւ որ կը նկատուի առաջին տպագիր հայ մատենան , մինչեւ վերջին մատենան որ դուրս ելած է հայ մամուլէն , պէտք էր որ յատուկ տեղ ունենային հոն : Մենք ոչ միայն չ'ունինք այդպիսի հաւաքածոյ մը , այլ չ'ունինք ց'արդ հրատարակուած հայ գրքերու մէկ կատարեալ ցուցակն իսկ ի ձեռին : Միթարեան վարդապետ մը , Հայր Գարեգին Զարհանէլեան , հրատարակեց 1883 ին Հայկական Մոթեզուս-Լիւն , ուր ամբողջած է իրեն ծանօթ բոլոր հայ գրեանց մէկ ցանկը , — շատ թերի զժբաղդաբար : Մատենադարանի Մասնախմբը ամբողջացնելու է այդ ցանկը , որոյ մէջ յիշատակուած իսկ չ'են թուրքիա եւ Ռուսիա տպուած շատ մը հայ գրքեր , եւ ջանալու է որ այդ բոլոր մատենաներէն մէկ մէկ օրինակ գտնուին Մատենադարանին մէջ :

Մասնախմբը պէտք է ձեռք բերէ նաեւ բոլոր հայ պարբերական հրատարակութեանց հաւաքածոյները : Հարկւրաւոր հայ լրագրեր եւ հանդէսներ ունեցած ենք առաջին հայ թերթէն սկսեալ , զոր ի լոյս կ'ընծայէր Տէր Յարութիւն քահանայ Շմաւոնեան , ի Մաղրաս , Աղաբաբ անուանով , 1794 ին , եւ որուն մէկ կատարեալ հաւաքածոն Հայր Մկրեանի քով պահուած է : Հայ գրականութեան համար ինչ թանկագին գանձ մը կ'ըլլար ունենալ բոլոր այդ հաւաքածոյները Ազգային Մատենադարանին մէջ : այդ պարբերական հրատարակութեանց մէջէն է որ օր մը պիտի քաղուին մեր ժամանակակից պատմութեան նիւթերը . առնոյն մէջ կարելի պիտի ըլլայ գտնել մեր վարչական , ընկերական , թատերական , անտեսական , ընտանեկան կեանքը . պէտք է թողուլ որ Ժ. Գարու Հայոց կեանքին այդ թանկագին վաւերագրերը կորսուին :

Մասնախմբը պէտք է ջանայ նաեւ հաւաքել օտար լեզուներով հրատարակուած բոլոր այն գրքերը , որոնք Հայոց վրայ կը խօսին . ճամբորդութիւններ մեր բնավայրին մէջ , ուսումնասիրութիւններ մեր կրօնքին , մեր լեզուին եւ մեր անցեալին վրայ , թարգմանութիւններ մեր հին հեղինակաց :

Գալով հայ ձեռագրերու , ի հարկէ ըզմարի է որ Մատենադարանն ունենայ անոնցմէ ալ ճոխ հաւաքածոյ մը :

Եւ այս հաւաքածոյները ձեռք անցնելու համար կարելի է՞ գոհանալ այն գրքի նուէրներով որք պիտի ըլլան Մատենադարանին : Այդ նուէրներն յաճախ մեր նուիրատուաց գրադարաններն աւելորդ կարասիներէ մաքրելու միայն կը ծառայեն : Այդ կերպով կարելի է հազարաւոր մատենաներ ունենալ , բայց զուրկ մնալ հայ մատենագրութեան ամենէն կարեւոր գործերէն , որք պէտք է Զատնէն , եթէ կ'ուզուի ամբողջացնել Ազգային Մատենադարանին հաւաքածոյները :

Սակայն Ուսումնական Խորհուրդ եւ Մատենադարանի Մասնախմբը ինչպէ՞ս պիտի ընեն այս ամենը , առանց դրամի , առանց նիւթական միջոցներու . — ահա՛ մեծ խնդիրը :

Անհրաժեշտ է որ Ազգային Վարչութիւնն Ուսումնական Խորհրդոյ եւ Մատենադարանի Մասնախմբին տրամադրութեան տակ դնէ տարեկան գումար մը Մատենադարանը ձոխացնելու համար : Ինչ պիտի ըլլայ այդ գումարը եւ ինչպէ՞ս պիտի հայթայթուի , այդ Վարչութեան գիտնալիք բանն է . բայց ինչ որ մենք գիտենք , սա է թէ այդպիսի գումար մը գտնել դժար գործ է՞ . բարեբաղդաբար վերջին Քաղաքական Ժողովներն յաջողեցան ազգին պիւճէն հաւասարակշիւ եւ ոչ եւս հացագործ Զաքար աղաներ Պատրիարքարանի դրան տուել եւ կը պոչտան ազգէն ունեցած իրենց պահանջքը գանձելու համար : Պատրիարքարանը կրնայ նոր հասոյթի աղբիւրներ գտնել , անօգուտ պաշտօնեաներու տրուած թոշակներ զեղջիլ , եւ տարեկան համետո գումար մը յատկացնել Մատենադարանի ձոխացման նպատակին : Հայ մատենաներու կատարեալ հաւաքածոյ մ'ունենալ այնքան



կարեւոր է մեր մատենագրութեան համար, որ ինչ գոհողութիւն ալ այդ մասին կատարուի, քիչ է :

Եւ յետոյ, կը սպասենք մեր մեծատուններէն որ այսքան անտարբեր չը մնան հայ մատենագրութեան մասին եւ յօգուտ Մատենադարանին զրամական նուէրներ ընեն, որոնցմով կարելի ըլլայ ձօնացնել այդ հաստատութիւնը : Տասնութերորդ դարու վերջերը եւ դարուս առաջին կիսուն մէջ, ուր մեր ազգի մտաւոր վիճակը, բաղդատմամբ արդի վիճակին, շատ յետամընաց ու խեղճ էր, մեր մէջ կ'եղէին հարուստներ, որոնք մեծ գումարներ կը նըռելէին բազմահատոր գրքերու տպագրութեան համար. ունէինք Շահրիմանեաններ, Աղեքսանդր Ռաֆայէլ Ղարամաններ, Կարսեցի Երանուհի Տիկիներ, Յովհաննէս աւիրայ Տատեաններ, Գարաքէհեա Մահեսի Աբրահամ ամիրաներ, եւ այնքան ուրիշներ, որոնց անունները կը կարգանք հիմայ՝ մեր գրադարանաց բազմահատոր հայ մատենաներուն առաջին էջերուն վրայ, երախտագէտ ներքողներով ընդելուզուած : Բայց կարծէք թէ վերջին երեսուն տարիներու մէջ մեր հարուստներու գրասիրութեան զարգացումը մեր ազգային զարգացման հետ հակընթաց ուղղութիւն ունեցած է : Թրքահայոց մէջ շատ հարուստներ գտնուեցան վերջերս որք բարենպաստակ հաստատութեանց գումարներ նուիրեցին կամ կտակեցին. ոչ մէկ հայ մեծատուն գտնուեցաւ որ գրական մըրցանակ մը հաստատել մտաբերէ եւ շատ քիչեր զոհողութիւն յանձն առին օգտակար գրքերու տպագրութեան համար : Ինչո՞ւ մեր հարուստները, նիւթապէս օժանդակելով մեր Մատենադարանին, յոյս չը տան թէ իրենք ալ գիտեն քաջակերել հայ մատենագրութիւնը եւ մասնակցիլ գործնապէս այն ձեռնարկներուն, որք անոր զարգացման կը միտին :

Այդ նիւթական օգնութիւններով միայն կարելի է մեզ ունենալ մեր Ազգային Մատենադարանը, Այդկերպով միայն այդ հաստատութիւնը կրնայ իրապէս օգտակար ըլլալ ազգին եւ բովանդակել ասկէ առաջ տպուած բոլոր հայ գրեանք եւ պարբերական հրատարակութեանց հաւաքածոյները : — Գալով անոնց որք այսուհետեւ պիտի

տպագրուին, Ազգային Վարչութիւնն իսկոյն միջոցներ պէտք է ձեռք առնու որպէս զի ամեն հայ հրատարակիչ իր իւրոյ ընծայած գրքերէն կամ թերթերէն երկու օրինակ ղրկէ Ազգային Մատենադարանին : Պէտք է որ Պատրիարքարանը ղեկուցանէ զայս ամենուրեք ուր հայ տպագրութիւն կը կատարուի : Չ'ենք կարծեր որ գտնուի հայ հրատարակիչ մը որ մերժէ այսպիսի ղեկոյցի մը համակերպիլ : Նոյնը չե՞ն ըներ նաեւ Փրանսացի հրատարակիչք, որոնց գործերէն երկ երկու օրինակ կը ղրկուին եւ կը պահուին Ֆրանսայի Ազգային Մատենադարանին մէջ :

Ուսումնական Խորհուրդ եւ Մատենադարանի Մասնախումբ պէտք է հոգ տանին նաեւ որ հայաբնակ գաւառաց զանազան տեղերը եւ նոյն իսկ մայրաքաղաքիս թաղերուն մէջ գտնուած հայ ձեռագրերու եւ եկեղեցական հնութիւններու մէկ կատարեալ ցանկը պատրաստուի, որպէս զի կարելի ըլլայ կատարել հարկ եղած հսկողութիւնն անոնց պահպանման համար : Դիտէ՞ք որ ղեռնոյն իսկ ի Պոլիս կան ձեռագրեր որք եկեղեցեաց մէջ լքուած, անծանօթ, աննշան մնացած են : Դեռ հազիւ քանի մը ամիս առաջ Պոլսոյ թաղերէն միոյն մէջ քահանայ մը եկեղեցւոյն հին գրքերուն մէջէն կը գտնէր մագաղաթէ հինգ հարիւր տարուան պատկերազարդ Աւետարան մը, որուն գոյութենէն ոչ ոք տեղեակ էր :

Նոյնպէս, Թուրքիոյ հայաբնակ գաւառաց մէջ, որչա՞փ մատենադարաններ ունինք, ուր պահուած են մեր հին ձեռագրերէ թանկագին մնացորդներ : Դեռ վերջերս կը կարդայինք Արաբաթի մէջ թէ գերմանացի Տօթթօր Բեւք, որ հնութիւններ եւ արձանատի գրութիւններ կը հաւաքէ Վիրխովի համար, տեսեր է շատ հայերէն ձեռագրեր իւր աւանդատին մէջ, ի Վարադ եւ մասնաւորապէս յԱղթամար. այդ ձեռագրերէ ոմանք 900 տարուան հնութիւն ունին եղեր : Մշոյ Սուրբ Կարապետի վանքը 130 ձեռագրէ աւելի կը պարունակէ, Արմաշու վանքը 200 ի մօտ ձեռագիր. եւ ուրիշ վանքեր ալ, Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքը, Սերաստիոյ Ս. Նշան վանքը, Արզնոյ վանքը, Մշոյ Ս. Առաքելոց վանքը կը պատուանակեն ձեռագրեր. ինչո՞ւ թողունք որ այդ հին

նշխարները մեր մատենագրութեան՝ մնան անծանօթ . ինչո՞ւ է՞ ունենանք անոնց յանկերը եւ չը հրատարակենք զանոնք , ինչպէս կ'ընեն Վիէննայի Միլիթարեանք Եւրոպայի գտնուող հայ ձեռագրոց համար :

Եւ այդ ձեռագրերէ զատ որչա՞փ թանկագին նշխարներ կը մնան դեռ մեր եկեղեցիներուն մէջ, թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառաց . որչա՞փ եկեղեցւոյ հին սպասներ, պատմական գաւազաններ , խաչեր , վակամներ, սկիւններ , մատուռի տուփեր , պատկերներ կը գտնուին անոնց մէջ . Ի՞նչ շահեկան կ'ըլլար անոնց ցուցակներն ունենալ , անոնց պատմութիւնը քաղել յիշատակարաններէն , ստուգել խնամով , արձանագրել , եւ ապահովել անոնց պահպանութիւնը : Այդ հնութեանց զննութիւնը օգտակար չը պիտի ըլլար նոյն իսկ մեր բնավայրին մէջ ծաղկած արուեստներու ուսումնասիրութեան տեսակէտով :

Մատենադարանի Մանասխումբը կազմուած է այժմ երեք ձեռնհաս անձերէ . Իբր գրահմուտ , Հայր Մկրեան , Տէմիրճիպաշեան Եղիա Էֆէնտի եւ Ֆնտըլեան Գառնիկ Էֆէնտի գործին մարդերն են աւներկայ եւ պէտք է շնորհաւորել Քաղաքական Ժողովը իր ըրած խղճամբող ընտրութեան համար . սակայն փափաքելի է որ Ազգային Վարչութիւնը , ի նկատ առնելով այն կարեւոր դերն զոր կրնայ կատարել այդ նորընտիր մարմինը , առաւել եւս զօրացնէ զայն , եւ մեր գործօն անձնաւորութիւններէն չորս անձինք աչակից տալով վերոյիշեալ երեք գրագիտաց, այդ Մանասխումբը վերածէ եօթն անդամներէ բաղկացեալ Խնամակալութեան մը : Այսպէս այդ Խնամակալութիւնը , կազմուած գրական հմտութիւն եւ մատակարարութեան ձեռնհասութիւն ունեցող տարրերէ , պիտի կարենայ ձեռք առնուլ այն միջոցներն որք անհրաժեշտ են մեր եկեղեցական , գրական եւ պատմական յիշատակարանաց պահպանութեան՝ թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառաց մէջ, եւ պիտի փութայ տալ Ազգային Մատենադարանին այնպիսի կազմակերպութիւն մը , որ համապատասխանէ իր կոչման :

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

## ՀՈՒՆԿ ( 1 )

Առ Տիգրան Կամարական

Անունդ անոյծ, Հո՛ւնկ, կապուեցաւ  
Երկարակազմ անքեւ բռնկոյն  
Ծանր ո՛ւր քեքեւ, ամառի կրկն,  
Որ սողալով սասանաւ գ  
Թընցունեկ մարդն երկե յերկիր,  
Շուստնոյիկ մարդն այս դարուն  
Կեցադաւեցեց այլ դառնալիչս . —  
Անունդ անոր, Հո՛ւնկ, կապուեցաւ :

Որո՞ւն արդեօք, մեկե որո՞ւն  
Շարեցիր դու գրռումն՝ անկնոս,  
Որ յանգգայս աչացրդ սակ  
Մարմին առաւ՝ հրապոյր համակ,  
Թեւն հոգիւյ շուրջը ծըգեց,  
Միտք իւր հերաց մէջ յոյրեց .  
Մըքինե՞ս սեպի, սարսուռ անծա՛ն  
Հոգիդ ու միտքդ, ո՛հ, ունեցան . . . :

Մըքինե՞ս սեպի այս աշխարհիս,  
Ուր գիծն ուղիղ ու ծուռ շեղուն  
Տիրացեալ ելլա քան զեւ:  
Քաղաքները՝ քարեր ու կոյս .  
Երկար ամեկ ինչ կը պատէ,  
Միտքն անգամ սէրսը կը կոչէ:  
Միտքդ՝ հերաց մէջեկն աղքատ  
Ամեկ ինչ մութ տեսաւ լուսնոյն :

Եւ անծանօթ սարսուռ մ'երկա՛ր  
Պըսըսեցաւ հոգւոյդ մէջ կոյս՝  
Քայլաշմեկ ցուրտ սարսուռն էր այն:  
Եկաք հիմայ գիւղ կը սեղմէր .  
Յամր, անողոք, կըրծէր հոգիդ .  
Ի՛նչ որպէս զի որսն ըլլայ պարս,  
Սեւ տաճարն ու սեւ օրերն ու  
Մըքուրիւններն հոն կը կըրծէր :

Տըպարսեկն տուն քո ձախալ,  
Մութ խորշերէն մըքին քո խուց,  
Թըրեւ երկար հիմայ ձախալ:  
Խուց կը զգայիր, փոս՝ ոսկի սակ .  
Գըլորէիր ու գայրէիր:  
Անցորդներուն, պարսպներուն,  
ձախիկ խորշովդ դիտէիր .  
Կարգայիր նոյն մըսածումն հոն :

(1) Ողբացեալ Հունկ գրաշարին վրայ երկրորդ բանաստեղծութիւն մ'է այս . Առաջինն Երկրագունիս Հանդիսին մէջ հրատարակուեցաւ : Ընթերցողը կը յիշեն թէ Հունկ գրաշարն իր չարասան ճէգ զըլխիկն ի Գում-Գափու երկաթուղւոյ զըծին վրայ դրաւ ի հանգի՛ս . . . :



Երեսասարդ, դեռ սեռահեր,  
Հաճոյից հիմաւ, հաճոյից աճեմ եր,  
Հիւսեմ հաճոյի, — խորշոմ դիտել:  
Դու փոստահաւ մ'եղար ձախի:  
Միշտ աւելի սուր նայումսիդ  
Բըրիւի մեռ ջրիւր, ու միշտ,  
Միշտ փորեցիր ձիգ խորշոմներն  
Մահկանացուաց ձախիս վրայ:

Նոճեաց երբեք մեր ձախսներ  
Մուր առաւել եմ քան աշուր.  
Ու աստուկաց քեզին ըստիսակ  
Թանձրագոյն եւս երեցընեմ  
Դիծերն երեսմ մեր ձախսուց:  
ձերմակ քեռոց ու քոյս ոսոց  
Ընդմէջ յառաջ տարիւր յամառ  
Փոստահաւ գործդ, Հո՛ւնկ, սեղոյ՝ս:

Վարդափառ մեր աշտերու հո՛ւն  
Արշալուսոյ մը ծաւալով  
Փոստերուդ մնայլըն հրդեհեմ:  
Հողը վարդին վրայ կու տայիր.  
Արշալուսին, աշտին վրայ,  
Համբոյրներու խոստմանց վրայ,  
Ուրաւագրաց վրայ երանութեան  
Մուր փոսին հողը ծածկեիր...:

Այսպէս, ամեն պայծառութեանց  
Ընդդէմ, ընդմէջ աշխատեցար,  
Հո՛ւնկ, մահաշոք վաստակդ տե՛ղ:  
Նաւուն կարե ծիրն ի ծովուն,  
Յերկինս անկուն ծիրն աճեմ կարին,  
Փոստահաւ փորոց աշտդ  
Մ'չ եւս, աւա՛ղ, այլ յանկուցին.  
ձախիս սե՛ղ ծիրն, աճեմ միայն կար:

Եւ օր մըն ալ, մոլորեցի՛մ  
Տրպարանին ուղիւ ձախիս,  
Դաշտաց ուղիւ դու քրոնկցիր:  
Յառաջ մտեաւ... մօտ սեւ գրծին,  
Չոյց սեւ գրծին անշարժ, անվե՛րջ.  
Քե՛զ Աստուծոյ ձախիս խորշոմ  
Սեւ անխաւառ գիծին այն քուցան.  
Բըրիւի ու քանդ, ո՛ր փոստահաւ:

Բըրիւի տալի ու քանդ, Հո՛ւնկ, Հո՛ւնկ.  
Բո Արարի՛ն ձախսն իսկ դու  
Պիտի փորել յանդընդեմ...:  
Պատուաւ առ առեց տուաց՝  
Շոգեշարժ կառն անխաւառ...:  
Եւ անուղի, Հո՛ւնկ, Հո՛ւնկ, կապուեցաւ  
Երկարուղի սեւ գրծերուն,  
Մուր մեր դարուն եւ Աստուծո՛յ...:

ԵՂԻՍ.

## ԱԴԱՄԵԱՆ ԲԱՆԱՍԵՂԾ

(Ուսումնասիրութիւն)

Անակնակալ մը չէ որ պիտի ընեմ Մա-  
«Է» ընթերցողներուն ըսելով թէ դերա-  
սան Ադամեանն ունէր իր մէջ բանաստեղծ  
Ադամեան մը, երկուքն ալ զուգահեռաբար  
զարգացած, ընդարձակուած, կատարելա-  
գործուած, երկուքն ալ իրենց ինքնութիւն  
անհատութիւնն ու կեանքն ունենալով այդ  
ընդարձակ անձնաւորութեան մէջ,  
երկու տարբեր անձ ենթադրել տալու չափ  
այլազան: Ադամեանի բանաստեղծութիւնը,  
մեծագոյն մասամբ հրատարակուած առան-  
ձին հատորով ինչպէս եւ այլ եւ այլ թեր-  
թերու մէջ, արդէն ծանօթ են շատերու.  
Եւ անոնք որ ողբացեալ արուեստագէտին  
մտերմութիւնը վայելած են, կը յիշեն որ  
յաճախ, հիւանդութենէն առաջ եւ նոյն  
իսկ հիւանդութեան միջոցին, մէկ քանի  
բարեկամի առջեւ կամ բաղմաթիւ ընկե-  
րութեան մէջ, Ադամեան տուր էր զրպա-  
նէն թղթի կտոր մը կամ տետրակ մը հա-  
նելու եւ կարգալու, դիմագծութեան վար-  
պետ խաղերով շեշտելով անձնւոր բառ,  
ձեռքի թեթեւ շարժումներով լրացնելով ա-  
նոնց իմաստը:

Այդ բանաստեղծութիւնները դերասանի  
բանաստեղծութիւններ չեն, պարանոյ ժա-  
մերու զբօսանք մը, արուեստագէտի քմա-  
հաճոյք մը չեն, այլ ճշմարիտ գրական  
արտադրութիւններ, որք իրենց հե-  
ղինակին կուտան յատուկ տեղ մը, շատ  
քիչ ճանչցուած ու գնահատուած, մեր  
գրականութեան մէջ: Ուսումնասիրութիւնս  
նպատակ ունի ցուցնել այդ տեղը, որ կար-  
ծուածէն աւելի մեծ է եւ փայլուն:

Ադամեան մեր մէջ ամենէն աւելի ճոխ  
ու բաղմազան ընթերցում ունեցող անձե-  
րէն էր. առանց իր միտքը դպրոցի մը մէջ  
բանտարկելու, կարողացած էր ու կը կար-  
դար դասական, ոսմանթիք, իրապաշտ  
հեղինակներ, քննադատական, փիլիսոփա-  
յական, արուեստագիտական, աստուածա-  
բանական գիրքեր: Իր «Համլէթ»-ը բաւա-  
կան է ցուցնելու համար որչափ հեղինակ  
կ'ուսումնասիրէր, որչափ քննադատ կը-  
թղթատէր իր զերերէն իւրաքանչիւրին հա-  
մար. բայց իր կարողացած մատենաները

միայն իր դերակատարութեան համար չէր որ օգտակար կ'ըլլային . լայն ու ձկուն իր մտքին մէջ սերմեր կը ցանէին . անոնք օր մը բողբոջելու , ուռճանալու սահման ունէին : Եւ այսօր մեր ձեռքն ունինք ընդարձակ գործ մը բազմակողմանի յատկութիւններով , որ մեծաւ մասամբ պիտի մնայ ու անկորուստ պիտի պահէ անունն իր հեղինակին , աւելի երջանիկ քան շատերն իր արուեստակիցներէն որոնց փառքը մեռած է իրենց հետ :

## Ա.

Անոնք որ դեռ տող մը չեն կարդացած այդ քերթուածներէն ու Աղամեանը կը ճանչնան Համլէթի մենախօսութեանց եւ Լիր արքային անէծքներուն մէջ միայն , պիտի ենթադրեն թէ Շէքսպիրի թարգմանին տաղերը ցոլքեր են շէքսպիրեան բանաստեղծութեան , խորհրդաւոր , փիլիսոփայական , մելամաղձիկ գրութիւններ , ճիւղաղներով , ուրուականներով լեցուն , մըրըրիկներու սառսուռով համակ դողողուն ու գերեզմաննոցի մթութեամբ խմորուած . երբէք , երբէք . բաց ի երեք կամ չորս ուտանաւորներէ որք նմանութիւններ են պարզապէս կամ ընդլայնումներ (Մարք Կոնստանտին , Ալ Գանն , Դերասանը) միւս գրեթէ բոլոր կտորներն այնպիսի գրութեան են զորս Շէքսպիրէն տող մը չկարգացող մարդ մը պիտի կրնար գրել , ընդհանրապէս զուարճախօսական , երգիծական , սիրային , վիպական , վարդապետական , կրօնական տաղեր , թեթեւ , թռչուն , սիրուն ոճով մը գրուած , յաճախ հեռու մեծ բանաստեղծութեան ոճն ըլլալէ :

Իր երեք հարիւրի չափ ոտանաւորներուն մէջ , Աղամեան , նախ անգոյն ու տկար նմանող մը ուսմանթիք բանաստեղծներու , հետզհետէ իր աղբիւրները բազմապատկած , իր արտայայտութեան միջոցները զարգացուցած եւ իր մտածութեան շրջանակն ընդլայնած է , Ֆրանսացի եւ իտալացի հէքաթաղիւր , երգիծաբան , վարդապետական բանաստեղծներուն հետեւութեամբ յաջող գործերու ծնունդ տուած եւ հոսկ ապա Ֆրանսուս Բօրէի արտասանելի քերթուածներուն ձեւով գրած է քերթուածներ , իրական կեանքէ առնուած , զիտողութեամբ , գոյնով , շարժումով լեցուն :

Աղամեան ոչ միայն մեր գրականութեան մէջ արդէն ծանօթ սեռեր ծաղկեցուցած է , այլ եւ բոլորովին նոր սեռեր մտցուցած եւ մշակած է . այդ նորութիւնը գնահատուած է արդէն Ռուսահայոց կողմէ . իր առաջին գործոց հրատարակիչը , Պ. Ս. Արծրունի , յառաջաբանի մը մէջ կ'ըսէ թէ մինչեւ այն ատեն իրենց հրապարակին վրայ տիրող տոհմասիրական միակողմանի գրութեաներուն տեղ , Պ. Աղամեան հոգեբանական բանաստեղծութիւն մը երեւան հանած է , « որ Բայրոնի եւ Պոշկինի լիրան (չէփոթել մեր լիրային հետ) կը նուագէ , այն է համահնչութիւն մարդկային սրտի եւ արտաքին բնութեան » : Այս գովեստն , անձիշդ ու չափազանցեալ , — մանաւանդ որ խօսքը դեռ այդ առաջին հատորին վրայ է ուր նախադրեալը միայն կան ապագայ ճարտար գրողին , — ունի իր ճշմարտութեան մասը . « հոգեբանական » , չեմ գիտեր , բայց « նոր » բանաստեղծութիւն մը կը սկսի , այո , Աղամեանէն մըտնել Ռուսահայոց եւ ամբողջ Հայոց գրականութեան մէջ , թէեւ առանց ճանչցուելու , առանց տարածուելու , առանց նմանող ու հետեւող ունենալու : Աղամեան կը գրէ « երգիծական » ոտանաւորներ , սեռ մը որ գոյութիւն չունէր մեր մէջ , — բաց ի երեք կամ չորս այդ տեսակ բանաստեղծութիւններէ զորս կը գտնենք Աճէմեանի Այտասուք եւ ժպիտին ու Լոյս եւ Ստուերքին մէջ , եւ Ալփաղանի վերջին մէկ քանի կտորներէն որք կատարելագործութիւնն են սեռին , ամէնքն ալ սակայն Աղամեանէն ետքը գրուած — : Աղամեան ունի ուտանաւոր հէքաթաղներ , իսկապիսի գաղափարի մը շուրջ զարծող մտայածին պատմութիւններ , միամիտ ու համով ոճով մը վիպուած . այս սեռը ոչ միայն բոլորովին նոր է մեր մէջ , այլ եւ ուրիշ բնաւ մշակող չունի : Բոլորովին նորութիւն են նաեւ այն քօթական քերթուածներն որք հեղինակին վերջին օրերուն արտայայտութիւններն են , եւ որք ամենէն անկոխ ճամբայներէն մէկը բացած են մեր բանաստեղծութեան մէջ , մեծապէս ընդունակ զարգանալու եւ ճիւղաւորուելու :

Չեմ յիշեր այն վարդապետական ու փիլիսոփայական քերթուածներն որք նոր չեն



իրը սեռ , այլ նոր են իրր այդ սեռին յաջող տիպարներ :

Բ .

Աղամեանի գրուածներուն նկարագիրը մեծապէս պարզ է , յստակ եւ զիւրաւ վերլուծելի , ո եւ է կնճողութենէ դերձ : Ուղիղ մաքի մը եւ ուղիղ հոգիի մը ծնունդ են անոնք , մարդոց թերութիւններուն դէմ ծիծաղ մը եւ անոնց մոլութիւններուն դէմ զգուանքի աղաղակ մը , սէր ամէն բանի որ բարի է եւ գեղեցիկ , արդահատանք տկարներուն ու գրկեալներուն , ատելութիւն բազմին չիացած զաւակներուն , ամբարտաւաններուն , կեղեքողներուն դէմ , եւ ամէն բանէ աւելի , հաւատք մը՝ անխախտ ու անկեղծ՝ առ Աստուած : Այս հաւատքը որ ակտայնական ծայրայեղութեան մը հասած էր իր կեանքին վերջին օրերուն , կը տեսնուի իր առաջին գրուածներուն մէջ իսկ յորս մեղմ այլ համոզեալ շեշտով մը կը յայտնուի , եւ որ իր վերջին տաղերուն էական տարրը կը կազմէ , փայլատակելով անոնց մէջ , տաքցնելով զանոնք : Եւ կը յուսամ որ չէք զարմանար եթէ ըսեմ թէ Աղամեանի բանաստեղծութեանց գրեթէ Կէսը կը բաղկանայ կրօնական , վարդապետական , բարոյական քերթուածներէ , յաճախ տափակ , տկար եւ անջիւղ , բայց երբեմն ալ զօրաւոր հոգեւայացքով մը համակ թրթռուն :

Աղամեանի ոճին մէջ կան խորին թերութիւններ եւ միանգամայն փայլուն յատկութիւններ : Ունենալով ճիշտ ու ընդարձակ երեւակայութիւն մը , եւրոպական զրակահոլութեանց բազմազան կաղապարներուն մէջ թափուած , արուեստագէտի խառնուածք մը որ զգալ կուտայ իրեն ինչ որ կայ գեղեցիկ մարդուն ու բնութեան մէջ եւ զիտողի աչք մը որ էակաց եւ առարկայից հոգւոյն կը թափանցէ , լայն , ճապուկ եւ զարգացեալ միտք մը որ ամէն տեսակ գաղափարներ ընդունած եւ ամբարած է եւ առողջ գատողութիւն մը որ անոնց մէջ ընտրութիւն մը ընել տուած է իրեն , մըտածումներն ու զգացումները ստեղծուած բացատրութիւններով արտայայտելու եւ պատկերներով զայնա լուսաւորելու զիւրութիւն մը , իրաց եւ մարդոց ծաղրելի կողմերը տեսնելու եւ ի վեր հանելու ընդու-

նակութիւն մը , եւ բնական , ինքնաբերական , անբռնազբօսիկ արամուտութիւն մը , — ինչ որ իր գլխաւոր յատկանիշներէն մին է , — եւ այս ամենուն հետ , հայերէնի ինքնատուայ բայց բաւական կատարեալ ծանօթութիւն մը , եւ տաղաչափութեան վարպետութեանց եղական ընտելութիւն մը , Աղամեան նուազած է մէկէ աւելի թել ունեցող քնար մը , ինչպէս կ'ըսեն , եւ այդ քնարէն հանած է ճարտար հնչիւններ :

Աղամեանի գրուածներուն գլխաւոր թերութիւնն է անհաւասարութիւնը , իսկատիպ գաղափար մը եւ տափակութիւն մը քովէ քով , լաւ սկսած ու գէշ վերջացած քերթուածներ , հեղինակին վրայ ամէն համարում վերցնել տալու չափ : տկար կտորներ եւ զայն մեր մեծագոյն բանաստեղծներէն մին նկատել տալու չափ հօր գործեր . եւ ասոր պատճառն այն է որ Աղամեան ո եւ է յաւակնութեամբ չէ գրած այդ տաղերը , որք հոգեկան ու մտաւոր պէտքի մը զոհացում , արուեստագէտի ժամանցներն եղած իրեն համար . գրած է , ինչպէս որ ելած է , վայրկեանական տպաւորութեան ու ներշնչման համեմատ , թուղթին վրայ թափելով ամէն գաղափար որ ծնունդ առած է մտքին մէջ , հասարակ կամ նոր , տկար կամ ջղուտ . եւ լաւագոյն կտորներն անոնք են յորս ինքնատիպ զգայութիւններ կամ խորհրդածութիւններ յաջողապէս արտայայտուած են : Սեղմութեան , հոժութեան պակասութիւնն այնչափ զգալի կ'ըլլայ յաճախ , գաղափարներու ճապաղութիւնը , տափակ մտածումներու կրկնութիւնը , պարզ իմաստի մը երկարաբան արտայայտութիւնը , սովորականին եւ անսովորին անճաշակ առնթրութիւններ այնպէս ծայրայեղութեան կը հասնին որ գատարկ ու անդոյն տողերուն մէջէն Զանձութիւնը կը ցուցնէ մերթ իր սառեցուցիչ դէմքը տառնա :

Աղամեանի առաջին հատորը գրեթէ ամբողջովին այդ թերութիւններով լեցուն է :

Գ .

Աղամեանի անտիպ քերթուածներն , որք ի մօտոյ պիտի հրատարակուին ի Ռուսաստան , իր լաւագոյն գործերն են : Հեղինակը պահած է միշտ նոյն նկարագիրը , նոյն խորհելու եւ զիտելու եղանակը , միշտ

այն հանդարտ, խոհական, ծանրդուլի, բարոյական, թեթեւօրէն գուարճախօս ու մերթ բարձրօրէն բանաստեղծ մատենագիրն է, կարծես ընտանեաց հայր մը, լուրջ ու փորձառու, որ յաճախ կատակաբանութիւններով, մերթ բարոյական դասերով եւ մերթ ալ խանդավառանքի գեղեցիկներով կեանքը կը պատմէ ու կ'ուսուցանէ իր զաւակներուն: Բայց եթէ նկարագիրն անփոփոխ մնացած է, ոճը փոխուած է մեծապէս, աւելի հակիրճ, աւելի հաստատուն, աւելի խիտ է հիմայ, աւելի գոյն ու համ ունի, աւելի ճաշակ եւ աւելի խկատիւթիւն: Տաղաչափութիւնը գրեթէ կատարելագործութեան հասած է, մանաւանդ վերջին օրերուն արտադրութեանց մէջ, յորս տողերուն զիւրասահ ընթացքն ու յանգերուն եզական ճոխութիւնը Ա. Փանոսեանի բանաստեղծութեանց հետ կրնան մրցիլ:

Այդ անտիպ գրութեանց մէջ կան ամեն սեռէ քերթուածներ, մանկական բանաստեղծութիւններ (Ուսանողի նամակը, Շնորհաւոր Զատիկ առ Հայ մանկտին), կրօնական գեղծներ, (Երկու հատ Ի ծնունդ փրկչին, Թափօր աւագ ուրբաթ երեկոյեան), պարագայներէ ներշնչեալ տաղեր (Ի մահ \* \* \* Ի, Ի մահ Վիքթօր Իւկօյի, Ի մահ Ներսէս վարժապետեանի, Ի յիշատակ յոբելեանի Հայոց քլուպին Թիֆլիզու, Առ պատկառելին Մերենց Ի մահ նորա դստեր) ասոնք ամենքն ալ առաւել կամ նուազ միջակ արտադրութիւններ են: Երգիծական բանաստեղծութեանց մէջ է որ պիտի գտնենք ճշմարիտ գոհարներ, պարոնեանական մտածումներու եւ բացատրութեանց անակնկալ ճոխութիւն մը. «Զոյժ «Կռնջ»» ն ամենասիրուն պատմութիւնն է ապուշին մէկուն որ տղայութենէն ցոյց կուտայ ուղեղին աղքատութիւնը եւ որ սակայն բազմիցս բերմամբ հարստանալով կ'ըլլայ «գանձապահ կամ հոգաբարձու», «աղա Յարութիւն»: «Հոս հոս»ը կատարեալ հրաշակերտ մըն է, նոյն նիւթին վրայ:

Նոյնչափ գեղեցիկ է եւ «Հանդիսականք թատրոնում»ը, որու մէջ գաղափար ու գործադրութիւն նոյնքան յաջող են. «Փառութիւն» Ի ներկայացման մը, հանդիսականներէն մին իր քովին իր ցուցնէ օթեակ-

ներուն մէջ նշանաւոր անձնաւորութիւնները եւ անոնց պատկերը կը գծէ քանի մը տողով, հիանալի շարք մը երգիծական կենդանագիրներու. ահաւասիկ մէկ քանին.

Այժմ դարձէ՛ք ձեր աչքերը ալանսէն.

Ահա մի անձ, էրին բեռքում իր բեռնէն,

Նորա համար կ'աւելն ազնիւ եւ վեհանձն,

Անրապառ է իրօք ոսկոյ նորա Եւ անձն.

Ողորմութիւն քեզէ կ'անէ աղեհաց

Այլ կ'սպասէ որ փոխարէն այլ Աստուծ.

Թէ օգնութիւն անէ մէկին դրամական

Կը պահանջէ որ ողջ բաղանիս իմանան

Տասը ոսկի շնորհէք որքոյ Ս. Զատիկին,

Մինչ խեղճերուն փողն էր կերել մեծ պասին:

Ա՛, նորա մօտ կանգնողը մի տօբօռ է,

Խեղճ հիւանդաց մութ գերեզման կը փորէ.

Որովհետեւ կ'աւել քէ փող շատ ունի,

Անտարակոյս մեր մէջ դառնայ անուանի.

Փորի ցաւին վարունգ ունէլ պատիրէ.

Հոգեւարժին տալ բաղանիս կ'ուղարկէ.

«Միայն ես, կ'աւել, բաքօլի եմ աղօթար»

Ամեն տեսակ հիւանդութեանց այլ սիւլմար.

Հիւանդներն էլ իրանց չեն զանգասիր

Որովհետեւ մէկ որ դնողեց չեն տարիր:

«Հոգեհանդիս» ին սկիզբը շատ սիրուն է.

Մեծ արանին մէջ կայ մի դագաղ դրած

Ծածկեալ բեռնագօթ հարուստ, բանկազին.

Որդի՛ւ ազգականք բոլոր սեւագեղաց

Լալով . . . սպասեն ընթերցման կսակին:

Բայց դեռ հասած չէ այն րոպէն աւաղ,

Դեռ կսակակասարք պէտք է անեն նիստ

Դեռ պիտի օրհնեն դիակն ի դագաղ,

Օրն էլ երկու հեղ կայ հոգեհանգիստ:

Բայց ի զուր եզնին հանգիստ տալ հոգւոյն՝

Թշուառ մեծասան, որոյ այժմ հոգին

Թռչի դստեաց եւ շուրջն իւր որդւոյն,

Մասնիկ զոջալով արած կսակին:

Տեսնէ գերեցիկ խուրձ մանկանց դրպիրք

Եւ շուրջառապս մի տղէտ տրտէր.

Միտքը ուրիշներ, ձեռքով ժամագիրք,

Ո՛հ, նրալ աղօթքից բոլ փրկէ մեզ Տէր:

Շատ խկատիւք է եւ «Հրէշ»ը. աւելի սիրուն է «Քաջ տոհմասէր»ը, պզտիկ երգիծական պատմութիւնն այն պոռոտախօս անապարծին որ հարուստի մը տուն ճաշին վրայ մեծ մեծ ճառեր կը խօսի յանդգնութեան եւ գործունէութեան վրայ, եւ որ երբ գիշերը «գող կայ» Ի ճայնը կը լսէ, վերմակին մէջ փաթթուած ծակէ ծակ կը փախչի. «քանչեղի կերպով վիպուած է այս պարզուկ նիւթն, այնպիսի միամտութեամբ մը եւ համով մը զոր Աղամեանի



քով միայն կը գտնուէր։ Այս տեսակ զըրուածներ են «Առ Պ. Տոնապետեան», «Ուտից ուղորմութիւն» եւ «Երեսփոխան», երեքն ալ իր վերջին օրերուն արտագրութիւն,— զարմանալի չէ՞ զուարթութեան ու ծաղրաբանութեան անփոփոխ պահպանումն այդ մահամերձ հոգեոյն մէջ—։ Յանդերը անակնկալ են ու ճարտար, որոնց նման թէ թէյն իր վերջին երկու տարիներու քերթուածներն ունին, բան մը որ թեւեւ Ա. Փանոսեանի հետ իր յաճախակի տեսակցութիւններէն յառաջ եկած է։ «Ուտից ուղորմութիւն»ը փայլուն երգիծանութիւն մըն է պարահանդէսներով ազգային հաստատութեանց կամ աղքատաց օղնելու զրութեան, թէեւ ոչ զերծ կրկնութիւններէ եւ երկայնարանութիւններէ։ «Երեսփոխան»ը հրաշակերտ մըն է փարպետ տաղաչափութեան ու համով սրամըտութեան։ տեսէք երեսփոխանին պատկերը։

Ու յիշտի սոցի անգամ  
Երբ տեսայ քեզ եւ լրտեցի,  
Խօսեալ անմիջ կակալ կարկամ,  
Տեսայ հառակի բարձր ու գիւղի,  
Խեցգետնի նման դէմքդ կարմիր,  
Հագուստներդ ալ հիացայ՝  
Որ կը ձեռն կրտսն միտ Միր։  
Հապա մօրեդ սուր հաստամազ,  
Միջին դարու նման գիւցազնի,  
Ջուր թէ ուզէ մին շօտափել  
Անուշտ կարծէ լեւան ոգնի։  
Իսկ հապա այդ երկայն ու նեղ  
Կարմիր փեսիկ ծուռ խողովակ,  
Որ կարծես թէ տպաւորն քլար  
Տարտալ մթաց բոց նրբաւակ,  
Որու տակէն շուրջմանակի  
Յոյց տաւ մի մտն ներմակ քափեայ  
Ոյր պաշտօնն է զով պահպանել  
Ճարպոց գլուխդ այդ դուգնափեայ։

Գոհելիկ բառ մը կամ օտար բառ մը քնարերգական կամ խրթին գրաբար բառի մը հետ յանգ կազմելով ծիծաղաշարժ տրպաւորութիւն մը յառաջ բերելու զրութիւնը այս ոտանաւորին մէջ քանի տեղ կը տեսնենք,— Բախտ, դուզնաքեայ, քահանայ, Դահաւայ, Մանչէսթեր, հաչեա դեռ, ռոճիկ, Լաւրէնթի, քահ. քահ, նախագահ։

Աղամեանի անտիպ զրուածոց մէջ կան երկու ընդարձակ բանաստեղծութիւններ, իւրաքանչիւրն 5-600 տողով, Ուսանողք եւ Հնացած հինգ կոպէկնոցին պարտաւէժներ, երկու հէքեաթներ, առաջինը, հակառակ մէկ քանի սիրուն կենդանի կտորներու, տխար ու անհամ, երկրորդը չափազանց սիրուն նիւթով ու ոճով։ Տիպոսն արդէն կը բովանդակէ ամբողջ նիւթը, որ պատմութիւնն է ձեռքէ ձեռք անցնող հինգ կոպէկնոցի մը, ամբողջ կեանք մը արկածալից ու յարափոփոխ, մենախօսութիւն տեսակ մը մետաղեայ ժիլ Պլապի որ իր հանքային հանդարտ մանկութենէն սկսելով կը վիպէ գլխուն եկածները մինչեւ ժանգոտ ծերութիւնը, ընթերցողին աչքին առջեւն անցնելով շարք մը պատկերներ, մարդկային նկարագիրներ, հանրային բարուց եւ առանձին կենաց տեսարաններ, կատարեալ գլուխ գործոց մը, մեծապէս համեղ ու սիրուն։

Նոյնչափ համով ու գոգորիկ են Հրաշալէն եւ Հրէշաւորը, պատմութիւնն այն երկու եղբայրներուն որոնց մին, հանճար մը, կ'անտեսուի ամենէն, աղքատ եւ անհշան, եւ որոնց միւսը, այլանդակ հրէշային մարմնով տղայ մը, ի տես կը զըրուի, ամենուն զարմանքն ու հետաքրքրութիւնը շարժելով։ Երջանէն Շապէլը, հէքեաթ մը որուն նիւթը շատ սովորական է, բայց պատմութեան անտարբերի եւ գրաւիչ։ Հէքեաթի եւ առակի խառնուրդ մըն է «Փուշն ու վարդ»ը, այնքան հարուստ յանգերով, իմաստով ու բանաստեղծութեամբ։

Քիչ են այն կտորներն յորս Բօրէի նրմանութիւն մը փորձուած է, երկու երեք հատ, Հարաւորեմ, Մի քառ եւ Տերաբէն, բայց շատ յաջողած ու կատարելապէս նոր։ Հարաւորեմ հոգիով, զիտողութեամբ ու պերճախօսութեամբ զեղուն քերթուած մըն է, թուք մը անախտ ու սրիկայ հարուստներու դէմ ու արդահատանքի արցունք մը կոխոտուած աղքատին։ Խեղճ ընտանեաց հայր մըն է որ կը դիմէ մեծատունի մը օգնութիւն խնդրելով եւ որ անկէց կ'ըստանայ իբր ամեն նպաստ՝ սա հարցումը։ «Աղուո՞ր են աղջիկներդ»։ աղքատն, իր պատուոյ զգացման մէջ խոցուած, կը վա-

զէ սաստկեցնելու այդ հրէշը, բայց կանգ կ'առնէ յիշելով աւետարանին պատուէրն. այն իրիկունն իսկ այդ թշնամանուած անձը բանտ կը դրուի իբր մարդասպան: Կ'օրինակեմ նկարագրութիւններէն մին որ իրական բանաստեղծութեան նմոյշ մըն է.

Նախայտրեւում կար մի սենեակ գաւթի վրայ  
Ձեղին եւ ռամիկ բիրտ հաւախաւ զարդարուած,  
Կային անդ խառն անճեղագեցակ, սակայն բանկ  
Պղնձէ, արծթէ նոխ առարկայք եւ փայլուն  
Աւետանակներ եւ հայելիք. այլ նրանց մօտ  
Պասից կախուած պասկեներէի մի մեծ շարք.  
Ոչ ձեռագործք, այլ իւղափայ եւ արժան:  
Ալպօմ գրեանք, սեղանին վրայ ցիր անկարգ,  
Եւ մի փղսկրեայ համրիչներով հաշուաբան,  
Եւ արձուներ մեծաւապաս. մի կակուղ էլ բազկաբոռ  
Կրէր իւր մէջ աղան հանգիստ թէք բնկած  
Իւր աղնագործ խալաթին մէջ փառաւոր,  
Որի դեղին ծոպերից մին ձեռնումը  
Գարձներ խաղար, գրասեղանին յանգիման:  
Նոր անձրուած եւ դեռ ժայի նուրբ փոշին  
Երեսն ծածկէր. մագերէն սանճած աղջկանման,  
Աչերէն փոքրիկ ու ներս փառուած, նեղ հակաս,  
Հազիւ քրէր փառսուն տարուան տնաւակ,  
Եւ շատ լրայիւր էր նայուածքը իբր, յամառ,  
Ինչպէս լինի մի լաւ քառմած աւանակ:

Մէ Դասը օտարամոլութեան դէմ հզօր հարուած մըն է. իմաստակ օտարական մը հայ տիկնոջ մը զաւակները կը քննէ աշխարհագրութեան դասի. տան նկարագրութիւնը, տիկնոջ խօսքերը, պարոնին ծաղրանկարը շատ սիրուն են, բայց ամենէն աւելի սիրուն է այն պատասխանը զոր կուտայ տղոց տեղ մայրը օտարականին վերջին տարօրինակ հարցումին, այնչափ սիրուն որ հոս չեմ կրնար գնել զայն:

Խեղճ Տէրաբէրին մէջ հեղինակն աղքատ քահանայ մը կը ցուցնէ, որ պատարագի չըքեղ հանգեքծներուն տակ ձորձեր ունի, որուն առջեւ ժողովուրդը կը խոնարհի եւ կեղեցւոյն մէջ, առանց գուրքը անոր եւրեսն իսկ նայելու. բացի քանի մը փայլուն կտորներէ, այս քերթուածը շատ վար է միւս երկուքէն, զանդադութիւններ, տափակ եւ աւելորդ գաղափարներ շատ ունի:

Հէքեաթներէ եւ իրական քերթուածներէ զատ, Աղամեանի անտիպ գրուածոց մէջ կան բազմաթիւ բանաստեղծութիւններ զանազան սեռէ, գրեթէ ամենքն ալ գեղեցիկ, Ա. Ա. Գալաշէն, որուն մէջ հեղինա-

կին մէկ ուրիշ դէմքն ալ կ'երեւի, նկարիչ Աղամեանը, ծառ, իմաստասիրական հիանալի քերթուած մը, Յիշմէ Եւ, սիրային տաղ մը շատ փափուկ, Ա. Գալաշէն, նմանութիւն Հաճէթի գերեզմանոցի տեսարանին, Մաթի Կոստան, ընդլայնում մը Համլէթի յորդորին առ Օֆելիա, զգացմամբ ու բանաստեղծութեամբ լի գրուած մը, Մէ Կալէշ Զառ, իմաստասիր քերթուած մը, Փշրած յոյսեր, շատ խորին ու ճոխ փիլիսոփայական բանաստեղծութիւն մը, Պարիշէն, խորհրդածութեանց շարք մը, Եւ Յիշմէ Երէք, ճամբորդութեան երգ մը գունագեղ, Դերասան, գեղեցիկ նմանութիւն Քիշի նշանաւոր տեսարանին ուր գերասանն իր ներքին կեանքը կը նրկարագրէ, Հոջախան, ճարտար ու իսկատիպ կտոր մը, Հրաշէշէն աւելի, սիրային զգայուն տաղ մը, եւ ուրիշ մը, յանդուգն ուղերձ առ այն զոր հեղինակը կը կոչէ «Սուրբ պոռնիկ», Դիշէրայնէն այցելու, գողտրիկ նկարագրութիւն մոլորած թռչնիկի մը հիւրընկալութեան (բացի վերջի բարոյականէն). Գայլէ, նկարագրական վառվառն քերթուած մը, Իրաւան դէպք մը, սիրուն պատկեր պէպէքին համար հեղձամահ եղող աղջկան մը յուզարկաւորութեան, իրականութեան եւ բանաստեղծութեան ճարտար խառնուրդ, Ա. Ա. Կոստան, հոգեբու ճառաչ մը առ անհուն էակն զոր հեղինակը կը սկսի ընդհամարել իր օրհասականի թափանցիկ մարմնոյն մէջէն, խղճուած ցաւի եւ անկեղծ համակերպութեան սրտաշարժ ճիշ մը, Ա. Սաթի Կոստան, Լքեալ հիւանդին կարօտի արցունքն առ հեռաւոր սրտակիցն, բարեկամութեան ուժով զգացմամբ մը թրթռուն, եւ վերջապէս, ամենէն վերջը, ամենէն վեր, ամենէն հզօր, այն արիւնտ ու պերճախօս քերթուածը, զոր ուղղեց անհշան սկսնակի մը անոր յուսահատ ու յուռետես գաղափարները փարատելու համար. այդ քերթուածը, ինչպէս ամեն ոք կը յիշէ, ցնցում մը եւ զարմանք մը յառաջ բերաւ երբ հրատարակուեցաւ, ցնցում որովհետեւ ամենուն առջեւ կենդանի գոյներով կը նկարագրէր իր հիւանդութեան ու լքեալ վիճակին բոլոր սեւութիւնը, եւ զարմանք՝ որովհետեւ երե-



ւան կը հանէր բանաստեղծ մը զոր այդ դերասանին մէջ զեռ ոչ ոք տեսած էր , ոչ անոնք որ կարգացած էին իր հատորը եւ ոչ անոնք որ զինքը բեմին վրայ միայն տեսած էին :

Դ .

Եւ հիմայ , ի՞նչ տեղ պիտի տայ ապագան այս սիրուն ու ինքնատիպ բանաստեղծին , որ տարրեր մտցուցած է մեր դրականութեան մէջ , որ ստուերի մէջ իր հաճոյքին համար կ'աշխատէր , բայց որուն գրութիւններն անշահագործեալ հանք մը երեւան կը հանեն , այդ սրամիտ , զգայուն եւ խոհական գրողին որ զուարճարան ու ողջախոհ մտքի մը կը միացնէր ազնիւ ու ու վեհ սիրտ մը , այդ արուեստագէտին որ իր հիւանդութեան մինչեւ վերջին օրերը պահեց իր մտաւոր բոլոր յատկութիւնները եւ որուն այդ վերջին օրերուն անձնիւրը քերթուածի մը ծնունդ տուած է (ինչպէս կը տեսնենք թուականներէն) , այդ տարօրինակ անձնաւորութեան որ Հայոց մեծագոյն դերասանն ըլլալը ու Սալվինիի հաւասար դասուիլը բաւ չհամարելով , մեր ամենէն գողտրիկ բանաստեղծներէն մին ալ եղաւ , եւ որ , նկատելով իր վերջին զբոսութեանց ահալին կատարելագործումն , աւելի երկար ապրելով պիտի անշուշտ ըլլար շատ աւելի մեծ բան մը , այդ բանաստեղծին , վերջապէս , որ վայրկեան մը Դուրեանին հաւասարեցաւ իր այն հանրածանօթ հատուածին մէջ յորում իր յուզարկաւորութիւնը նկարագրողները կանխած էր .

« . . . Քանիցս անգամ ինձ բուեր Թէ սառն պատանգ պաղած մարմնոյս փաթարուեր , լրանն էլ գաւեր գտներն կաղնեայ դագաղին , Ժանգոս ու կոր պողպատով իւր մանգաղին . Սեւ պատկերներ յայտնդէին մէն միւսին . Ահա գային յուզարկաւոր հանդիսին , Սեւ ուրուականք , սեւ զգեսներով , սեւ մօրուք , Սեւ մաշոնցներ ձեռներուն մէջ հասց գիրուկ , Սեւ շալվարով ու սեւ ցուպով մի ժամկոչ Սեւ շալիկով՝ տրագուներ խառնագոչ , Որ լիբոսէն նրնջեցելոց շարական . Ի կենդանեաց ո՛վ որ լրեւ այդ կական՝ Հանգուցելոյն քիւր երանի սայ զուցէ Որ ականջներն յաւէս ընդ միտս էլ գոց է . Սոքա եմ որ մանն ամուսնի սոն մեզ ցոյց , Մինչ բուն կենաց վառէ մեզ ջանն հոգեւոյց , Առարկայից մէջ խնկանոս գործ ու մռայլ , Միայն մի բան աչի գործն լուսափայլ .

Թախեւ մեծ ծածկոյթին վրայ կարկած Լուսափողոյն եւ հանդարտիկ տարածուած Մեհաբեղէն ներմակ նիւթից լայն մի խաչ՝ Որ մեղմ ծալքով մարմինս ծածկէ պիտանս : Ես ընդ նմին դուստն հետեւիմ մեռելոց , Ուր հաւատօս մրուման աղօթք եւ հոգեւոյց . Պանպանիչն էլ սովորական անհրաժեշտ Փրսփայ սեւերն բերնէ քալուկ եւ անհետ : Անուշտ մէկն էլ պիտի գտնուի անպատեհ . Փղծկեալ ձայնով խօսելու վրաս փոքրիկ նառ , Յետ այնորիկ յուզարկաւոր քաղովիս : Յրուին անուշտ՝ տալով հոգեւոյս ողորմիս : Ինձ հետ քաղովին այն տեղ , հոգեւոյս քանկազին Ջաւակներն էլ Համլէր , Ուրիէլ , Լիւր եւ Քին . . . :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

### ՅԱՐՈ

(ՋՐԶԱՆԻ ՄԵ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ)

Ոտքերը միեւնոյն յենակէտին վրայ անխախտ , Յարօ կը դարձնէր ջրհանին անիւր , միակերպ ու անվերջ թաւալումով մը :

Քամանտօ խանին մէջ նոր հաստատուած ջրարաբաշխին անիւն էր այն , զոր ոչ ոք կըրցած էր դարձնել առտուքնէ՝ ի վեր , ոչ ոք՝ Ղալաթիոյ շրջուն բեռնակրութեան ամեն ազգի ներկայացուցիչներն անցած էին այդ մեքենային առջեւէն , ամենքն ալ ջգաճական ճիգերով հետզհետէ փորձած էին դարձնել զայն , եւ ուժասպառ՝ ձգած գաղտագողի փախած էին , քանի մը անգամ դարձուցածնուն վարձքն ալ խոնելով պահանջի :

Ու մեքենան , նման յաղթական ըմբիշի մը , որ քանի մը հակառակորդ տապալած՝ ուրիշի մը կ'սպասէ , ա'լ կը ցցուէր հոն , երբ Ղալաթիոյ չ'ես գիտեր ո՛ր գոհէն , հոն գտեր բերեր էին Յարօն , Տրապիզոնի շոգենաւէն զեռ երկու օր առաջ ինկած Պոլսոյ սալայատակներուն վրայ :

Յարօ այդ վիթխարի անիւնն առջեւ դանելով ինքզինք մէկէն , իր գիւղացիի անվատահոլութեան բնազդով՝ տարտամ վախ մըն էր զգացեր . ջրաբաշխն իր անիւնն սկաւառակը կը պարզէր հոն , խոշոր բացուած հրէշային ու կըրր աչքի մը տեսիլով . օ՛հ , ապահովապէս այդ մեքենայով չ'էր որ իր «Երկրին» արտերը կ'ոռողէին . կասկածած էր անկից . մեքենաւորութիւն մը այդ մեքենան . բայց Հրէան , որ հոն առաջնորդած էր զայն , ապահով-

ցուց զինք . իր տեղէն ցատքերով , կուրծքը մեքենային բռնատեղւոյն վրայ կը թռնցուցած՝ դարձուցած էր անիւր , մէկ , երկու անգամ . Յարօ տակաւ քաջալերեալ , մօտեցած էր այն ասուն ջրհանին , զիտած շօշափած էր զայն , — ինչպէս կը շոյես ձին որուն վրայ պիտի հեծնես , — եւ յետոյ միշտ անվտանգ շարժումով մը թափն անոր վրայ էր նետած :

Կէ հիմայ , կը դառնար անիւր միօրինակ , անսպառ ու յուսահատ թաւալումով մը :

Այդ մեքենային յամառ դիմադրութիւններէն յետոյ , ալ կարծես ռիսկոտութեան , հեծուկի անասնային հրճուանք մը կար տեսնել , որ այդ երկաթի բիրտ զանգուածը հազար հլու խոնարհումներ , ու պչոտող թեքումներ կ'ընէր մեր Յարօին դիմաց . վերջապէս :

Կը դառնար , կարծես մղուած խորհրդաւոր , աներեւոյթ զօրութենէ մը , իր թաւալմամբ ճեղքելով օդին մէջ հեղատաճ բուրակ մը , որ կ'սկսէր ու կը վերսկսէր անվերջ անհատնում , մինչ Յարօն անգիտակ իր հերակլեան գործունէութեան , ցցուած կեցած էր հոն անտարբէր , կարծես յաւիտենական շարժումի մը համար լարուած . եւ սակայն իր այդ անգիտակից ոյժը , անվերջով ու յորդ արտայայտութեանը մէջ մանաւանդ՝ այլապէս զրաւիչ , յափշտակիչ բան մը ունէր : Բայց ի՞նչ , անվերջով : — Ա՛ , իր հանդարտ մօրթին տակ , Յարօն , այն ի՞նչ խանդալատ յուզումով մօտեցեր էր այդ մետաղի կոշտ կտորին , իր առաջին աշխատանքը , նախափայլիք վաստակը Պոլսոյ մէջ , Ղալաթիոյ հրապարակին վրայ : Զ'է . այդ անիւն իրեն համար երկաթի անհեթեթ կոյտ մը չ'էր . աւելի , աւելի՛ բան մը , ապրուստի մարմնացումը , աշխատութեան վերացումը , զոր ալ հիմայ կը բռնէր , կը գրկէր ահա :

Հեռուն , այս պանդուխտն ալ թողեր , լքեր իր Խորհրդի Ժեռը , ջահէլ կլնը , ձորի մը կողը , անպատասպար ու խարխլած հեղակի մը տակ , իր օճախ . իր հաղար ուրիշ հայրենակիցներուն նման Պոլիս էր եկեր ինքն ալ , յաւիտենական բազմ ուրոնելու , որ յաւիտենապէս ալ , հոս կը յամառ խոյս տալ այս զրկեալներէն . եւ հիմայ , այս անիւնն առջեւ , անոր բռնատեղին իր ափերուն մէջ

սեղմած , ճակատագրին անիւր չ'էր այն :

Բայց անիւր կը դառնար , եւ թերեւս անոր համար կը դառնար ա՛յդպէս՝ զի այդ հսկային մէջ մոլեգին հայր մըն էր պահուած . հայր մը՝ որ իր որդւոց սիրովը ցընորեալ մոլորեալ , եկեր ինքն ալ ինկեր էր Ղալաթիոյ գեհնէին մէջ . ի՞նքն ալ նետուած այդ խաժամուժ ամբոխին ծոցը , մասնուած անոր յոյգերուն , եւ իր գործունէութեան միամիտ մասնակցութիւնը բերելով ապրուստի տենդոտ ու խօլական այդ մրցումին մէջ :

Իր շուրջ ամբոխը կ'եռուզեալ անտարայր բազմալատտակութեան մը մէջ . մարդկային մըջնակոյտի մը խուլ խոսկը կը լըսուէր , ծովեզրին ընդհարող եւ յետս ընկըրկող ալիքներուն պարբերական զննդիւնովը . Յարօ ի լուր խուժանին այս հատկեալ շնչառութեան՝ կը գրգռուէր , ինչպէս աղնուազգի նոյնք մը զոր օտար շշուկը կը խորչեցնէ , եւ նոր ոգեւորմամբ կը զարճնէր անիւր , կարծես անոր շառաչմամբ խեղդել ջնալով այն դիւային գործունէութեան միմունջը , որ յաւէտ կը բարձրանար իր շուրջ :

Կւ սակայն այդ զառանցկոտ գործունէութեան մէջ , հայ պանդուխտին այդ խիզախ վաստակը տարօրինապէս կազդուրիչ էր : Այս պահուս , հոն , այդ խանին մէջ , շուրջն ամեն կողմ , մարդկային միտքն ապրուստի հրաշէկ խարոցին հպմանց տակ , լուսնոտ շարժումներ կ'ընէր . դժուճ ու նենգաւոր հնարքներու մէջ կը սողար , կը թապլտկէր , եւ հայ պանդուխտը միակն էր գուցէ կեանքի այդ անհաւատար ճակատամարտին մէջ՝ որ արութիւն ունենար իր ճակատագիրն իր բնական այլ հաւաք ուժին վրստահելու : Իրարու դէմ լարուած մտքերու այդ անարգ գործունէութեան մէջ , մարմնական կորովի՝ այդ անկեղծ ու զեղիս ցայտումը մեքենային առջեւ , նախնական մարդու կոշտ , այլ անխաբար այդ վաստակը չ'ես գիտեր ի՞նչ ունէր լսեմ : Մտածման վայրկեաններ պիտի ունենայիք , յորս այս մարդն էն մեծ մարդը պիտի երեւար ճեղքի Ղալաթիոյ հրապարակին մէջ . պիտի հիւանայիք այդ լեռնականին վրայ , վասնզի ոյժ ունի , եւ է զի պիտի կարեկցէիք իրեն վասն զի բիրտ ոյժն ունի միայն . Օ՛հ , ըս-



տոյգ է, Ղալաթիոյ հրապարակին վրայ այդ հայ պանդխտին ճակատագիրը ճակատագիրն էր քիչ մը թրամվէյի ձերբուն, որոյ խուլ տրոփունը կը լսուէր այս պահուն առնթերակաց սալարկին վրայ:

Պարզամիտ մշակը, (վասնզէ՛հո՛ս միայն բեռնակիր է իր անունը,) յիրաւի, ինչո՞ւ կը լեցնէ Հրէին ջրամբարը, փոխանակ իր «այգիններ»ն ոռոգելու. արծակ դաշտին մէջ իր հպարտ կուրծքը ձիւնին ու փութին դէմ, կամ ճակատը քրտինքով խաշփռած, բահին փարած ու բռնին, եւ շրջապատեալ այն բոսիկ ու գլխաբաց պզտիկ վայրենիներէն, որք իր լաճէն են բոլորտիքը ձկլապող, ինչո՞ւ չը չնչեր իր դաշտերուն ծաղկաբուրումը, փոխանակ այս ախտաւարակ միջնորդը կլլելու: Ի՞նչու արտերէն վերադարձին, իր չինական հիւղակին մէկ խորհրդաւոր խորքը, իր խոնջ գլուխը չը հանգչեցնէր ամօթեամբ լանջքին վրայ իր կնոյ, որ բնութեան պարզեւած սիրունին է իրեն, եւ հոն չը ծծէ՛ր այն աննեղ սէրը, որ մահաւանդ պէտք մըն է իրեն, այդ բնութեան մարդուն Բաբէ՛, ուղեղը գինոյն գոլորչիովը խտացեալ, հո՛ս ալ պիտի երթայ մըթընչաղին, բայց... իր կենսականութեանէն մաս մը ցամքեցնելու հաճոյալաճառ պապչոտ կնկան մը ծոցը, հոն ձգելով իր օրուան բոլոր վաստակը, եւ դարձեալ իր ոյժը, որ իր վաղուան վաստակն է:

Ա՛հ, «\Սթանպօլ»ը, ի՞նչ ձգողութիւն, ի՞նչ տարօրինակ հմայութիւն, գաւառացի դիւրագրաւ մտքին համար:

Այսօր ջրհան մը տուեր են դարձնելու Յարօին, բայց վաղը բեռ մը պիտի տան իրեն գուցէ, կամ կրի անտուկ մը պիտի դնեն իր ուտերուն վրայ. բեռնակիր պիտի ըլլայ Յարօն, կամ իր բառովը Խանճալէր. եթէ բեռնակիր՝ օր մը լարծուն քարայտատակին վրայ պիտի սահի, ձմիլ, ու կնոջը մատնէրը չը պիտի խնամեն իր վէրքերը. եթէ Խանճալէր՝ չէնքի մը բարձրութենէն, սխալ քաղ մը առնելով լաստակին վրայ՝ կ'երեւակայեմ զինք որ թաւաղիւր կ'իյնայ, սալայտակին դէմ ժայթքեցնելով իր ուղեղն որուն ոչ ոք պէտք ունեցաւ հոս, Պոլսոյ մէջ. հէ՛գ մշակը:

Անիւր կը դառնար սակայն, եւ հիմայ այս մորմոքիչ մտածմանց մէջէն դիտելով

կտրիճն այդ մեքենային առջեւ, խանդաղատ կարեկցութեամբ մը պիտի տողորուէ իք իրեն նկատմամբ. տեսնելով իր մկանունքին կարկամիլ գալարիլը, ձեզի այնպէս պիտի դար թէ, ձենէ, ձեր էութենէն իսկ բան մը կը տանջուէր, կը չարչարուէր այդ մեքենային առջեւ...:

Սակայն, Յարօն կանգ առաւ յանկարծ. պիտի դադրէ՞ր դարձնելէ. — հանդարտ չարժումով մը հանեց իր Ժապէլը, իր Խաղճին, պատուհանի մը անկիւնը սեղմեց զանոնք, եւ արդէն անիւն իր ախերուն մէջ էր նորէն:

Զգեստը մերկանալու վայրկեանին կուրծքը չահիլ կուղէր, չէ թէ, այլ եւս հաճոյք մը, հեշտութիւն մը դարձած էր իրեն տեսնել այդ ըմբոստ երկաթի կոյտն որ հիմայ անհամար կ'ընեն իր առջեւ. ա՛լ թաքուն կերպիւ կատաղի, մոլեգին բան մը կար իր շարժումներուն մէջ: Արդարէ՛ թաթն ու այրած մրկած դաստակը, ուսուցիկ երախներով, ու յօդուածներուն ցայտումովը դրուագեալ՝ նետած էր բռնատեղւոյն վրայ, անիւնի ծծիքէն լանելով կարծես. եւ անիւր, լլկուած, կ'արձակէր կռնչիւն մը, իբր ձի մը այդ տխտանեան բաղկին գալարիչ ճնշումներուն տակ: Գլուխը բաց, կամարացեալ կուրծքը, պնդակազմ բաղուններն ու ձգտեալ բումբերը հանդերձին ձեղքերէն դո՛ւրս յորդած զեղած, Յարօն քրտնափայլ, ցցուած էր հոն, իրմէ դէպի մեքենան ծորեցնելով զօրութեան հոսանք մը, զոր եթերային ալիքներու մէջ բղխիլ կ'երեւակայէիք իրմէ: Պղնձագոյն դէմքն աղօտ ժպտի մը մէջ ցրուած, աչքերը զտպեալ հեշտութեան մը ցոլքերով, եւ շրթունքը բացուած արհամարհոտ ձեղքի մը մէջ, կարծես խուսափուկ հեշտութիւն մը հալածելով. ոնգունքը պրկուած՝ արտաշնչութեան բուռն հոսանքի մը տակ կը սարսռեցնէին իր խոպոպի պէտերը. կուրծքը մաղերու թաւուտով մը ագուցեալ, զինեալ՝ կը ցցուէր բանի մը փարելու տարտամ շարժումով. այդ կուրծքը չէր հեւար չարաչար, այլ հպարտ ու գեղեցիկ ծալքեր կը գծէր իր տախտակին վրայ. կ'ուռէր, կը ցածնուր, իր զօրաւոր չնչահոտութեան մէջ արձակելով չչիւն մը, կարծես սոյլը շոգեպինդ կաթնայի մը, ուրկից շարժիչ զօրութիւնը կը բղխի:

Բայց անիւն այլ եւս չ'էր կունչեր, այլ կը շաչէր, կը շառագէր. պատերուն կպչած կապարէ խողովակներուն մէջէն լսելի կ'ըլլար ջուրին վերամբարձ ցայտումներուն շշուէնը. հորին անդնդային խորութիւններէն ջրեղէն դերձաններ, ելեքտրական հեղանիւթի արագութեամբ կը մղուէին, կը վազէին այդ հսկայ շէնքին դէպի անհաւատալի բարձրութիւնները, ջրամբարը լեցնելով, ողողելով, հեղեղելով:

— Օհէ՛, օհէ՛, խրո՜... :

Լսելի եղաւ յանկարծ ձայն մը որ կը պոռար. բայց մեքենային կունչիւնը խափանելով այդ ձայնը, եւ Յարօն՝ անձնատուր իր շարժումներուն՝ չը լսեց զայն:

Բայց պոռչտուքը կը բարձրանար, կը սաստկանար:

— Հէ՛, օհէ՛, խրո՜... :

Յարօ կանգ առաւ այս անգամ. իր ծանրաշարժ գլուխը պտըտցուց չորսդին, ոչ ոք. յետոյ վեր նայեցաւ. — Հրէ՛ան էր:

Կէս մէջքէն պատուհանէ մը կախուած, Հրէան, խոշոր բացած իր աչքերը, գլխուն ու թեւերուն բոլոր շարժումներովը, եւ ձէթէ կրծուած ձայնին բոլոր զօրութեամբը, նշան կ'ընէր, կը պոռար որ ընդհատէ:

Ջրամբարը յորդած էր:

ՏԻԳՐԱՆ ԿԱՄԱՐԱԿԱՆ

ՍԱՆՈԹ ԴԵՄՔԵՐ

ԲԻԻԶԱՆԴ ՔԵԶԵԱՆ

Արեւելէ՛ խմբագրապետը — յորմհհետէ Արեւելք խմբագրապետ մը ունի — չ'ստորագրեր իր յօդուածները. պէտք չ'ունի ազոր. այն ողջամտութիւնը որ իր գրութեանց ամեն մէկ տողէն կը թորէ, կ'արտահոսի, կը զեղու եւ ընթերցողը խեղդել կ'սպառնայ, կը մատնէ զինքը. եւ ահա ասոր համար է որ Բիւզանդ ֆէլեան անունն Պոլսոյ լրագրութեան մէջ չի կարգացուիր յաճախ. եւ նորեկ մը գրական ասպարէզին վրայ թերեւս անոր գոյութեան կասկածն իսկ չ'ունենայ:

Բայց եթէ անունը չի լսուիր ստէպ, իր յօդուածներուն արձագանգը, շատ անգամ

պատճառած ցաւը կը հասնի կ'երկարի ամենուրեք. հարուածին սաստկութենէն, տրուելու ձեւէն՝ բազուկը կը ճանչցուի եւ այդ բազուկը ամենէն կարչնեղ թեւըն է, ճշմարիտ ըմբիշի բազուկ որոյ մատներուն խտութեան տակ, կը զարմանամ թէ գրիչը ի՞նչպէս չի փշրուիր ամեն վայրկեան:

Այն տրամարանութեան թանձրացեալ զանգուածը, որ Բիւզանդ ֆէլեան կը կոչուի հակասութեան հազուագիւտ մէկ մարմնացումն է միանգամայն:

Երբէք պաշապանողական ուղին՝ այսքան յարձակողական մարդու մը մէջ մուտ գտած չ'էր. ահա այն տպուորութիւնը որ իր հրապարակագրի կեանքը կը թողուզինքը ուսումնասիրողին վրայ:

Ո՞րն է այս հակասութիւնը տարբարողորուած ատեն ի՞նչպիսի գալիք անկեղծ անհատականութիւնը:

Մայրայեղ արմատականի մը վայելուչ հարուածելու տրամադրութենէն դատելով՝ իր յետախաղաց դեպերումները չ'են կրնար իր բուն համոզումը, իր ճշմարիտ դաւանանքը ըլլալ:

Բայց երբ կը տեսնեմք թէ բարոյականի եւ պահպանողական գաղափարներու այս համոզիչ ջատագովը՝ որ մեր հասարակութեանէն դուրս ալ, ամեն կողմ, իր պաշապանած եւ ջատագոված գաղափարներուն յաղթանակովը կը հրճուի ու պարտութեամբ կը դառնանայ, որ համաշխարհային պարագեւաբաշխութեան հանգիստի մը նախագահին պէս՝ մէկուն մրցանակ եւ միւսին յանդիմանութիւններ կուտայ. այս միամտութիւնը կը զարմացնէ մեզ եւ իր յօդուածները կարգացողները այս հրապարակագրին մեծ անունը լսելով, կ'երեւակայեն ալեւոր պատուելի մը, Միսաքեան մը իր տաղանդովը, Տերոյենց մը՝ աններող ատելութիւններովը, այնքան որ զինքը տեսնելէն վերջն ալ, իր սեւ մօրուքը ներկուած, եւ երիտասարդի առայգութիւնը դեղորէից ջնորհիւ ձեռք բերուած արուեստակեալ կորով մը պլոտի համարէին:

Եւ այս է ճակատագիրը որ իրենին պէս մեծ իմացականութիւնները չ'են կրնար չեղոքանալ. ասպարէզ պէտք է իրենց, ա-



ջր թող ըլլայ թէ՛ որ ձախը չի կայ . եւ այն ատեն, իրենց բնականին ներհակ ուղղութեան մէջ ալ 'ի յայտ կը բերեն այն տաղանդը զոր իրենց ճշմարիտ կոչումին պիտի ծառայեցնէին :

\* \* \*

Իր դէմքը՝ ոճին խառութիւնը չ'ունի . գիրուկ, հակայ, խնձորի պէս կլոր պունադեղ երես մը որուն վրայ ամեն ինչ հեղութիւն , չափաւորութիւն է . բաց 'ի ճակատէն որուն վրայ տագնապեալ մտքի մը բոլոր վրդու վումները կը կարգացունին :

Ոչ ոք իրեն չափ քաջ գիտէ ոտի մը պարտութեան մատնել , հարուածին ուժգինները ուղղելով տկարագոյն կողմերուն , տանն եւ հինգ տարիէ 'ի վեր զբաղական կրկեսին , ամենօրեայ պայքարին մէջ ստացուած սովորութիւն մը :

Այս պայքարը՝ իր հրապարակագրի բուրդոյութիւնն է . իր յօդուածներուն յայտնի երկարութիւնը՝ փաստերուն տուարկութեանց թուոյն նեղ կուգայ միշտ . եւ կ'ըզատ որ զրիչը՝ ակամայ կանգ կ'առնու ամեն անգամ :

Իր լուրջ ու ծանրախոհ հրապարակագրութեան անմատչելի չ'են սակայն ծիծաղն ու ժպիտը . անշուշտ Աբեւէյի խմբագրապետը քիչ անգամ կը խնդայ . բայց եթէ երբեք զիջանի ծիծաղիլ , կատակ ընել , կատարեալ նրբամիտ եւ զուարթախոհ մարդու մը յայտնութեան անակնկալը կուտայ ընթերցողներուն :

Որչափ աւելի պիտի սիրէինք այս գրական վաստակաւորը թէ՛ որ խոժոռելէ աւելի դիւրութեամբ ժպտիլ պիտնար , դատապարտելէ աւելի հեշտիւ ներել , եւ զայնելէ աւելի հաճոյք զգար փայփայելէ :

Բիւզանդ Քէչեանի գրականութիւնը կարծր ու անողոք սրտի մը ցուրտը ունի , պողպատի մը ցուրտը . թերեւս անոր համար որ իրեն բաժին ինկող գոյութեան մը ներկան եւ ներկայէն աւելի մոլթ ապագան կ'ընդունարէ , ինքը՝ որ ապերախտ կռուանի մը վրայ մաշեցնելու դատապարտուած է՝ հմտութեան եւ առողջութեան պաշար մը որով աշխարհներ կրնար չինել եւ որով իրեն համար հազիւ թէ տնակ մը կառուցած է :

\* \* \*

Կ'ըմբռնեմ ուրեմն իր գրականութեան բոլոր կարծրութիւնը , եւ բանաստեղծութեան եւ երեւակայութեան այն պակասը որ իր գրուածոց մէջ այնքան զգալի է :

Գրական ասպարէզը ընտրած լինելն արդէն՝ երեւակայութեան ահագին մէկ սխալը կը դառնի ինք եւ բնական է որ ո՞ր պահէ այդ թշնամոյն դէմ :

Իր լեզուով՝—վան զի յատուկ լեզու մը ունի այս հրապարակագիրը—յստակութեան եւ հոծութեան անհաւատալի զուգաւորման հարցը լուծած է :

Արուեստի , գեղեցկագիտական զարտուղութիւններու չի զոհեր երբեք իր պարբերութեանց կոնիկ ու պարկեշտ դարձրուածքը եւ իրաւունք ունի այսպէս ընելու . խմբագրապետ մը հիացուելէ աւելի հասկցուելու պէտք ունի :

Գրադիտական նրբութիւններու եւ մանուածապատ արգուզարդերու սովորութիւնը չ'ունին իր ամենօրեայ յօդուածները , այն գործաւորուհեայ պէս որք ամեն օր Պոլիս գործի երթալու ստիպուած՝ ամիսն անգամ մը փողոց ելլող տիկիներու փերեւետումները 'ի բաց թողած են :

Բայց այս պարզութիւնը զուրկ չ'է ճաշակէ , արժանապատուութենէ եւ շատ անգամ նորութենէ . Աբեւէյի խմբագրապետը որքան ալ բեռնաւորեալ ըլլայ , խղճի պարտք մը 'ի գործ դնելու գիտակցութեամբ միշտ ուշադիր ու խնամոտ գտնուած է իր արձակին , որ իր ամենօրեայ գէնքն է , եւ որուն գէթ սուր եւ հատու ըլլալուն ջանք խնայած չ'է մինչեւ ցարդ :

\* \* \*

Իր ապագան :

Թերեւս զործէ քաշուած , եկամուտի տէր մարդ մը՝ որ սակաւապէս կեանքի մը եւ խնայողական ամենանուրբ հաշիւներու , գիտերու , հնարքներու շնորհիւ ձեռք բերած հարստութեան մը արդար վայելումը կ'ընէ , որ բնական գիւղէն քաղաք չ'իջնար , օրն իրիկուն արձարանի մը անկիւնը ճատրակի խաղերուն կը հետեւի անձկութեամբ , իր հրապարակի կեանքին պայքարները յիշելով քառակուսի տախտակին առջեւ :

Թերեւս քերթող , մը մի՞ զարմանաք , երգիծաբան , հեգնող քերթող մը որ կշիռէն կամ տեսակէն — որակէն կամ քանակէն —

նենդող մամլածառին կամ թղթալածառին դէմ օր մը զայրանալով, ամբողջ աշխարհի փերեզականերուն դէմ ելլէ ինքը՝ անոնց պաշտպան նախախնամութիւնը՝ ոտանաւորներու դառնաշունչ հատորով մը մարդկային առեւտուրին յաւիտենական խաբէրայութիւնը մասնանիչ ընելով աշխարհի:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

## ՄԵՐ ՀՈՐԻՋՈՆԻՆ ՎՐԱՅ

— Հայր Ալիւան հիւանդ է. բայց իր ապրինման յուրերը արդէն խնդութեամբ կը լեցնեն ամեն օրեր: Մեր յուրերու հաւաքածոյին գլուխը միայն կրնայինք դնել այս բերկրային յուրերը:

— Պ. Գաբրիէլ Էզրանեան կը մեռնի Բարիքի մէջ. Էզրանեան կսակ կ'ընէ որ իր մարմինը այսին, եւ Բէն Լաշէզի գերեզմանասան մէջ կը կանգնէ ղիակիզութիւնը, քաղաքային յուրակաւորութեամբ: Ֆրանսայի մայրաքաղաքին աղբիւս հող ուսանողները իրենց մեծագոյն բարեւար կը կուսնցունեն, եւ Բարիքի հայ արուեստագէտներն ալ իրենց ամենէն անձնուէր պաշտպանը:

— Գրիգոր Արծրունի կը հրատարակէ Էփէլիս, իսթալական վէպ. մեծ ցնցում Ռուսահայոց մէջ. ՄԱՍԻՍ գրադասական մը պիտի նուիրէ այդ գործին:

— Լազարեանի հոգւոյն համար Պատարագ կը կատարուի Մոսկուա. Լազարեան ձեմարանի ուսանողներն իրենց բացակայութեամբ կը նսեմանան այդ հոգեհանգստին մէջ. կ'երեւի թէ Լազարեան ձեմարանի մէջ ամեն բան կը սովորին բացի . . . երախագիտութենէ:

— Ի Մոսկուա Արշէր ամսագրի ղեկեմբերի համարին մէջ Պ. Պ. Գ. Վէստլովըսկ եւ Մ. Պէրպէրեան յօդուած մը հրատարակած են Աղամեանի վրայ, իր պահկերով. պիտի թողուինք որ Ռուսերը մենէ աւելի՞ գնահատեն մեր մեծ ողբերգակ դերասանը:

— Տ. Ազարեան Պատրիարք շիրիմ մը կը կանգնէ Աղամեանի վրայ. Ռուս է մեր բաժինը անոր մէջ. Երբ հաս մը պիտի կանգնենք Պարոնեանի վրայ:

— Չորս Ռուսականքեր կը գտնուին այժմ Իսախան ծայնական երաժշտութիւն ուսնելու. Պ. Պ. Շահլամեանց, Ամիրջանեանց, Ծովակ եւ Վարդիկեան: Իսկ Թրքահայոցմէ՞:

— Պ. Վահրամ Սրվանեան, Վիէնայի երաժշտական Համալսարանէն վկայեալ, իր առաջին նուագահանդէսը պիտի տայ Գասը-գիւղ 'ի մօտ (նչ 'ի Մօսա). Գասը-գիւղցւոց երաժշտասիրութիւնը ծանօթ ըլլալով, վստահ ենք թէ խուռներամ պիտի երթան ունկնդրել հայազգի այս սաղանդաւոր եւ երիտասարդ արուեստագէտը:

— Պ. Փափագեան կը ներկայացնէ Բերա

Վերսիի Թատրոնը տեղական կեանքէ իր մէկ Թատրերգութիւնը, «Սիրային Զրօսանք», Զափրաստեանի առաջնորդութեամբ: Թատրերգակին փորձը այնքան նշանակելի եւ գնահատելի է որ իր գործը չըննած իսկ մեր շնորհաւորութիւնները կուտանք իր գաղափարին:

— Թատրասիրաց նորակազմ խումբ մը քանի մը յաջող ներկայացումներ տուած է մասնաւորապէս 'ի Մարքի-գիւղ. Պ. Ա. Զօպանեան կը Թարգմանէ այս խմբին համար Տօսէի Ֆրանսէի յիշատակէն Էնէ Թատրերգութիւնը. քաղուած համանուն վէպէն, որ վարձատրուած է Ֆրանսայի Ակադեմիայէն. գրական վայելք մը պիտի ըլլայ այդ ներկայացումը հայ լեզուաւ:

— Պ. Պ. Մաղարեան եւ Սպիարեան, մասնակցութեամբ Օր. Քէնչեանի, ներկայացուցեր են 'ի Թիֆլիս, արքայական Թատրոնին մէջ, Ֆառսէն երկու արարուած հայերէն. հայերէն լեզուն դաշներգին մէջ շատ փորձալուր հնչած է, կ'ըսեն:

— Վ. Լէննաի հոշակաւոր գրականութենէն Պ. Հարսէլպէնի որդմամբ, երիտասարդ զինական Պ. Քայնջ յօրինած է հայերէն քերականութիւն մը գերմաներէն լեզուով. իրենց լեզուին համար սկեպսիկ Հայերը կրնան դառնալ Պ. Քայնջէ:

— Գեորգեան ձեմարանի աշակերտները, ձեմարանի դահլիճին մէջ ներկայացուցած են Պարոնեանի «Մեծ. Մուրացկաններ», կ'օժանդակուէրու դերերը դուրս ձգելով. վանքի մը մէջ ներկայացուած այս կատակերգութենէն այդ յապաւումը ընելով շատ Բառք ցուցուցած են ղէպի իրենց մեծաւորներն, բայց քիչ յարգանք արուեստագէտի մը գործին:

Պ. Զուհաբեան, — կը հաղորդեն մեզ—վերջնականապէս յաջողած է իր Զեմիլէն ընդունել իսկ Բարիքու Էսէն Թատրոնին մէջ:

ՄՈՂՈՐԱԿ

## ՄԱՍԻՍԻ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ

Ա. Պ. Ե. Գահրէ: — Թերթ յղեցինք Զեպ. Բաժանորդագիրը թղթադրոշմով ղրկեցէք: Յօդուածները չեն յարմարիր Մասիսի:

Ա. Թէոդոս, Կ. Պոլիս: — Մասիսի խոստացած յաւելումը բաժանորդը միայն ձերապէս ստանալու իրաւունք ունին, իսկ ձեռքէ գնողները վճարմամբ:

Ա. Պ. Ե. Սամսոն: — Բաժանորդագիրը կրնաք թղթադրոշմով ղրկել:

## ՎՐԻՊԱԿ

Մալխի Ա. Թուրքի մէջ երեքած: «Եղիա Տէմիր-Ճիպաշեան» յօդուածին մէջ չակերտով պէտք է ըլլայ հետեւեալ տողը. Գրականութեան հոլերին դրաւ էր օրօրօցին մէջ այն խմբին որ պէտք էր երեն:

ԱՐՏՕՆԱՏԷՐ Կ. Ս. ԻԹԻԻԻՃԵԱՆ

## ՓՈՐԱԳՐԻԶ ՍԵՐՎԻԶԵՆ

ՎԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, Մուլքան Համամ, Աղբիւրին տով